ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
գործուղման արդյունքների
վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Կարինե Բադալյան ----- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Ստոկհոլմ (Շվեդիայի Թագավորություն), 2025թ. դեկտեմբերի 15-19-ը ներառյալ:

3. **Հրավիրող կողմը.**

Այցը իրականացվել է մասնագիտական խմբով, բաղկացած՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, Արդարադատության նախարարության, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Առողջապահության նախարարության ներկայացուցիչներից՝ Արդարադատության նախարարության նախաձեռնությամբ:

4. **Գործուղման նպատակը.**

Այցի նպատակն էր ծանոթանալ Շվեդիայի Թագավորության մայրաքաղաք Ստոկհոլմում գործող «Բարնահուս» կենտրոնների գործունեությանը,

ուսումնասիրել անչափահասների մասնակցությամբ քննչական և դատավարական գործողություններին վերաբերվող գործընթացները:

5. **Քննարկված թեմաները.**

- Հուդինգ համայնքում գործող «Բարնահուս» կենտրոնում երեխաների ռիսկային իրավիճակների ծառայությունների, կենտրոնի ընդհանուր մոդելի, գործունեության և միջգերատեսչական համագործակցության ներկայացում,
- բռնության զոհ դարձած երեխաների համար ծառայությունների ներկայացում,
- օրենքի հետ բախման մեջ գտնվող կամ ռիսկային իրավիճակում գտնվող երեխաների համար ծառայությունների ներկայացում,
- Ստոկհոլմի «Բարնահուս» կենտրոնի գործունեության մոդելի ներկայացում,
- միջգերատեսչական համագործակցություն, գործակալությունների համագործակցություն՝ Ոստիկանություն, դատախազություն, սոցիալական ծառայություններ, առողջապահություն,
- մանկական հոգեբուժության դերը «Բարնահուս» կենտրոններում,
- Շվեդական փորձի կիրառելիությունը հայկական բարեփոխումների համատեքստում,

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հանդիպումներ իրականացվել են Հուդինգ համայնքում գործող «Բարնահուս» կենտրոնում և Ստոկհոլմի «Բարնահուս» կենտրոնում: Ելույթով հանդես եկան Հուդինգի «Բարնահուս» կենտրոնի կոորդինատոր Թերեզ Անդերսոնը, Ստոկհոլմի «Բարնահուս» կենտրոնի ղեկավար Գաբրիելա Բագերը, ինչպես նաև միջդիսցիպլինար թիմի ներկայացուցիչները՝ ոստիկանության, ներկայացուցիչ, մանկաբույժ, սոցիալական աշխատող, դատախազ, փոխհամայնքապետ:

Ելութով ներկայացվեց կենտրոնների գործունեության մոդելը, դիմումների, գործերի ընդունման կարգը, հարցաքննությունների արձանագրություններ, երեխայակենտրոն և տրավմայի նկատմամբ զգայուն մոտեցումներ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպումը ճանաչողական էր, փաստաթղթեր չեն ստորագրվել, պայմանավորվածություններ և որոշումներ չեն կայացվել:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Աշխատանքային խմբի ներքին քննարկման արդյունքում որոշվեց իրականացնել.

- Օրենսդրական փոփոխություններ
- Միջգերատեսչական համագործակցություն
- Գործառնական բարելավումներ փորձնական Բարնահուսում
- Կազմողական կարողությունների զարգացում
- 2026 թվականի քայլեր՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Գ. Բարսեղյան ---------- 23.12.2025թ